ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 2, 1964 Общественные науки

Ս. Ա. Բաբայան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ԲՐՈՆԶԵ ԱՊԱՐԱՆՋԱՆՆԵՐԸ

Հայաստանի պետական պատմական թանգարանի հարուստ ֆոնդերում պահպանվում են բրոնզե մի քանի հարյուր ապարանջաններ, որոնք հայտնաբերվել են պատահականորեն, պեղումների ժամանակ։

Դրանցից հնագույնները հայտնաբերվել են Լճաշենի պեղումներից և վերաբերվում են վաղ բրոնզե ժամանակաշրջանին[1], իսկ հիմնական մասը՝ մ. թ. ա. 13—4-րդ դարերին։ Ապարանջանների մի մասը նկարագրված է ուսումնասիրողների առանձին աշխատություններում և հոդվածներում, սակայն մեծամասնությունը մինչև այժմ մնայել է առանց կարգավորման և հրատարակման։

Իրանք ըստ իրենց արտաքին տեսքի բաժանվում են հետևյալ տիպերի.

Հեռացվող ծայրերով ապարանջաններ *(138 հատ), ամենամեծ խումբն են կազմում և բաժանվում են 4 տարբերակի։*

Առաջին տարբերակը բաղկացած է 82 ապարանջաններից, պատրաստված է բրոնզե լարից, կտրվածքում կլոր է կամ կիսակլոր։ Ծայրերը կտրված են, կամ թեթև սրած, իրարից հեռու։ Տրամագիծը 4—11 սմ է, քաշը 4—92 գրամ։ Սրանք հայտնաբերվել են հիմնականում Լճաշենում, Աստղաձորում (աղյուսակ 1, նկ. 2), Մուխանում (աղյուսակ 1, նկ. 10), Ցամաքաբերդում, Բասարգեչարում, Թաքիայում, Իջևանում, Նոյեմբերյանում (աղյուսակ 2, նկ. 5), Ուղունթալայում, Քաղսիում, Ալավերդում, Եղեգնուտում, Թագավորանիստում, Սանահինում, Ստեփանավանում (աղ. 1, նկ. 3, 6, աղյուսակ 5, նկ. 13), Փարպիում, Գոլովինոյում, Մեղրիում, Ղափանում (աղ. 5, նկ. 12), Կարմիր բլուրում, Էլարում (աղ. 3, նկ. 5), Ջրառատում, Ոսկեվազում, Ղրղիից և Էջմիածնի թանգարանից[3]։

Երկրորդ տարբերակը բաղկացած է 30 ապարանջաններից, որոնք առաջին տարբերակի ապարանջաններից տարբերվում են տափակ ծայրերով, որոշ չափով նմանվելով օձագլուխ ապարանջաններին։ Տրամագիծը տատանվում է 4 սմ մինչև 8,5 սմ, քաշը 5—68 գրամ։ Հայտնաբերված են Լճաշենից, Ցամաքաբերդից, Մուխանից, Այրիվանքից, Աստղաձորից, Բասարգեչարից, Դիլիջանից, Գոլովինոյից, Ճամբարակից, Ղրղիից, Այրումից, Հաղպատից (աղ. 1, նկ. 7), Ուղունլարից, Լենինականից, Բջնիից, Կարմիր բլուրից, Ջրառատից (աղ. 1, նկ. 9, աղ. 2, նկ. 6, աղ. 3, նկ. 6, աղ. 4, նկ. 7) և Աթարբեկյանից։

---

1 *Պեղումները կատարել է Հ. Հ. Մնացականյանը, նյութերը չեն հրատարակված։*

2 *Բոլոր ապարանջանների քաշը բերված է ըստ տիպերի և տարբերակների № 1 աղյուսակում։*

3 *Էջմիածնի նախկին թանգարանի ժողովածուները 30-ական թվականներին հանձնվել է պետական պատմական թանգարան։ Այս հավաքածուում կան համարյա բոլոր տեսակի ապարանջանները, սակայն մենք դրանք չենք նշում։ Այստեղ և հետագայում նշվող 3-րդ աղյուսակը, որը գտնվում է մեր ձեռքի տակ, չենք հրապարակում։*

Երրորդ տարբերակը բաղկացած է 20 ապարանջաններից, որոնք նման են առաջին տարբերակին, կենտրոնական մասում մի թեթև սեղմված են ու ձվաձև։ Տրամագիծը տատանվում է 6,5 սմ մինչև 11 սմ, քաշը 7—35 գրամ։ Հայտնաբերված են Աստղաձորից (աղ. 1, նկ. 5), Բասարգեչարից, Կարմիր բլուրից, Մուխանաթ թափայից, Քաղսիից, Մեղրիից, Ալավերդուց, Ստեփանավանից (աղ. 1, նկ. 3—4), Լենինականից և Էջմիածնից։



Աղյուսակ 1

Չորրորդ տարբերակը բաղկացած է վեց ապարանջաններից, որոնք նման են առաջինին, աչքի են ընկնում ծայրերի լայն հեռավորությամբ, որը համարյա տրամագծի $^1/_3$-ն է կազմում։ Տրամագծի տատանումը 6—10 սմ, քաշը 8—35 գրամ։ Դրանք հայտնաբերվել են Արթիկում, Ստեփանավանում (մեկական օրինակ), մյուսների տեղը անհայտ է։

Քննարկվող ապարանջանների տիպը գոյություն է ունեցել երկար ժամանակ, դրանց թվագրական սահմանները ճշտելու համար մեծ նշանակություն ունի Մուխանաթ թափայում գտնված ապարանջանը, որի հետ մեկտեղ գտնվել է գունազարդ խեցեղեն (ՀՊԹ, 1439/420), սակայն դրա ճիշտ թվագրումը դժվարացել է նրանով, որ նույն շերտում գտնվել են երկաթյա առարկաներ։

Նույնանման ապարանջաններ հայտնի են Թազաքենդի հավաքածուից, որը թվագրվում է մ. թ. ա. 13-րդ դարով[4]։

Ապարանջանների թվագրումը հշտվում է այնպիսի հուշարձաններով, ինչպիսիք են Թաքիան[5] և Ալավերդին մ. թ. ա. 2-րդ հազարամյակի վերջը, Լճա-

4 Պահվում են Վրաստանի պետական թանգարանում։

5 А. А. Мартиросян, Т. С. Хачатрян, Комплекс изделий из Такиа. Изв. АН АрмССР, № 11, 1959, стр. 93.

շենը (միայնակ դամբարան), Աստղաձորը, Մուխանը, Զոլաքարը, Այրիվանքը[6], որոնք թվագրվում են վաղ ուրարտական ժամանակաշրջանով, Կարմիր բլուրը, Գոլովինոն[7], Աթարբեկյանը[8], Յամաքաբերդը և Բասարգեչարը[9], որոնք թվագրվում են մ. թ. ա. 7-րդ դ., Ջրառատը, որը թվագրվում է վաղ հայկական ժամանակաշրջանով։

Այսպիսով, հետազոտվող ապարանջանների վերոհիշյալ տիպը լայն տարածում է ունեցել Հայաստանում և իր գոյությունը պահպանել է (եթե չհաշվենք Մուխանաթ թափայի ապարանջանը (13—4-րդ դ.)։

Մոտեցող ծայրերով ապարանջանները (42 օրինակ) կտրվածքում կլոր են և ձվաձև, իսկ մոտեցող ծայրերի միջև ունեն արանք։

Իրենց տեսքով բաժանվում են երկու տարբերակի։

Առաջինը բաղկացած է 31 ապարանջաններից, որոնց ծայրերը հարթ կտրված են և շփվում են իրար։ Տրամագիծը 4,5—8,5 սմ, քաշը 5—85 գրամ։ Գտնվել են Լճաշենում, Կամոյում, Մուխանում, Ջրառատում, Բասարգեչարում, Բջնիում, Աթարբեկյանում, Կիրովականում, Սանահինում, Գեղարոտում, (աղ. 1, նկ. 11) և Շամշադինում։

Երկրորդ տարբերակը բաղկացած է 11 ապարանջաններից, որոնք առաջինից տարբերվում են թեք կտրված և իրար վրա նստած ծայրերով։ Տրամագիծը 5,5—6,5 սմ, քաշը 8—33 գրամ, գտնվել են Կամոյում, Մուխանում, Զոլաքարում, Բասարգեչարում, Ստեփանավանում (աղ. 5, նկ. 13), Հաղպատում, Մեղրիում, Իջևանում։ Քննարկվող տիպի ապարանջաններն ընդգրկում են համարյա նույն տերիտորիան և ժամանակաշրջանը։ Քանի որ այս խմբում չկան Ջրառատի վաղ հայկական ապարանջաններ, ապա մենք կարող ենք դրանք թվագրել մ. թ. ա. 13—6-րդ դարերով[10]։

Օղակաձև ապարանջանները բաղկացած են 25 միացող փակ օղակներից, որոնք ունեն կլոր կամ ձվաձև կտրվածք, երկուսի վրա կան թեք քերթիկներ և ձվաձև զարդ։ Տրամագիծը 6,5—8 սմ, քաշը 14—39 գրամ։ Գտնվել են Դիլիջանից, Ռետկին լագերից, Գոլովինոյից (աղ. 5, նկ. 8), Խրտանոցից (աղ. 5, նկ. 7), Ստեփանավանից (աղ. 5, նկ. 9—11), Թումանյանից, Սևանից, Կամոյից և Շամշադինից։ Թվագրվում են Ռետկին լագերի, Գոլովինոյի և Խրտանոցի ժողովածուներով մ. թ. ա. 9—6-րդ դ.։

Իրար վրա անցնող ծայրերով ապարանջանները գլխավոր խմբերից են, ունեն երկու տարբերակ։

Առաջին տարբերակը բաղկացած է 56 ապարանջաններից, որոնք պատրաստված են կլոր և կիսակլոր կտրվածք ունեցող բրոնզե լարերից. սրանց ծայրերը կտրված են կամ թեթևակի սրված և անց են կացված մեկը մյուսի վրա։ Տրամագիծը 4—10 սմ, քաշը 5—129 գրամ, համարյա բոլորը զրկված են

---

6 Т. С. Хачатрян, Раскопки в Айриванке, Изв. АН АрмССР, № 12, 1957, стр. 95.

7 А. А. Мартиросян, Раскопки в Головино, Ереван, 1954, табл. V—VI.

8 А. О. Мнацаканян, Раскопки могильников у сел. Атарбекян. КСИИМК, вып. 60, 1955, стр. 37.

9 А. О. Мнацаканян, Арх. находки у сел. Басаргечар. КСИИМК, вып. 60, стр. 50.

10 А. О. Мнацаканян, Г. А. Тирацян, Новые данные о материальной культуре древней Армении. «Известия» АН АрмССР, № 8, 1961, стр. 73.

11 А. А. Мартиросян, Раскопки в Головино.

նախշերից, միայն մի քանիսի ծայրերը զարդարված են նախշերով։ Գտնվել են Կամոյում, Այրիվանքում (աղ. 1, նկ. 12), Զոլաքարում, Բասարգեչարում, Կարմիր բլուրում, Նոր Արեշում, Բչնիում, Ստեփանավանում (աղ. 4, նկ. 3), Կոլերում, Աթարբեկյանում, Ալավերդում, Թումանյանում, Լենինականում, Ջրառատում։

Երկրորդ տարբերակը բաղկացած է 10 ապարանջաններից, որոնք առաջիններից տարբերվում են նրանով, որ ծայրերը շրջանակի $^1/_3$-ից ավելի անցնում են իրար վրա։ Տրամագիծը 4—8 սմ, քաշը 12—103 գրամ։ Գտնվել են Սևանում, Կամոյում, Բասարգեչարում, Դիլիջանում, Ռետկին լագերում, Ալավերդում (աղ. 1, նկ. 13), Աթարբեկյանում (աղ. 4, նկ. 1)։ Այս ապարանջանների ժամանակագրական սահմանները որոշվում են վաղ ուրարտական հուշարձաններով (Զոլաքար, Այրիվանք) և վաղ հայկական հուշարձաններով (Բասարգեչար, Աթարբեկյան, Ջրառատ) մ. թ. ա. 9—8-րդ, 5—4-րդ դ.։



Մ. 1:3

Աղյուսակ 2

Կլորացված ծայրերով ապարանջանները թվով երկուսն են, որոնք կտրվածքում կլոր են և ծայրերը վզնոցի նման կլորացված։ Տրամագիծը 6—6,5 սմ, քաշը 6—100 գրամ։ Հայտնաբերված են Զոլաքարից և թվագրվում են մ. թ. ա. 9—8 դդ.։

Երկլար ապարանջաններ 7 հատ են և բոլորն էլ պատրաստված են կլոր կամ կիսակլոր կտրվածք ունեցող բրոնզե լարից ու կենտրոնից իրար վրա ծալվել և ոլորվելով դարձել են ապարանջան։ Ծայրերը իրարից հեռու են։ Տրամագիծը 6,5—8 սմ, քաշը 68—100 գրամ։ Հայտնաբերվել են Քաղսիից (աղ. 2, նկ. 10—11), Մուխանից (աղ. 3, նկ. 9), Բասարգեչարից։ Սրանց թվագրումը հիշտվում է Մուխանի և Բասարգեչարի ժողովածուների ժամանակով և թվագրվում 8—6 դդ. մ. թ. ա.։

Ատամնավոր ապարանջաններ ունեն չորս տարբերակ։

Առաջինը բաղկացած է 20 ձուլված ապարանջաններից, որոնք հարթ են ներսի կողմից, իսկ արտաքին երեք կողմերից ծածկված ատամնավոր ելուստներով։ Նրանց մի մասը ամբողջ երկարությամբ հավասար տրամագիծ ունի, իսկ մյուսների ծայրերը լայն և տափակ են։ Այդ խմբին ենք միացնում չորս օղակավոր ապարանջանները, որոնք ունեն նույնանման ատամնավոր մակերես։ Դրանց տրամագիծը 5—9 սմ, քաշը 12—180 գրամ։ Գտնվել են Ոսկեվանում, Արմավիրում, Նոնուսում, Ջոլաքարում (աղ. 3, նկ. 4), Կամոյում (աղ. 3, նկ. 6), Մուխանում, Ցամաքաբերդում, Աթարբեկյանում, Ջրառատում, Շամշադինում, Հաղպատում, Ստեփանավանում (աղ. 3, նկ. 3) և Մեղրիում։

Երկրորդ տարբերակը բաղկացած է 22 ապարանջաններից, որոնք կրկնում են առաջինի ձևը, բայց տարբերվում են նրանով, որ արտաքին եզրերը ծածկված են ուղիղ կամ թեք քարթիկներով, որոնք ատամների տպավորություն են ստեղծում, դրանց տրամագիծը 6,5—12 սմ, քաշը 15—203 գրամ։ Գտնվել են Արմավիրում (աղ. 3, նկ. 3), Կամոյում, Մուխանում, Գոլովինոյում, Ստեփանավանում, Ուղունլարում (աղ. 3, նկ. 1)։



Աղյուսակ 3

Երրորդ տարբերակը բաղկացած է 13 նույնանման ապարանջաններից, որոնք վերոհիշյալներից տարբերվում են նրանով, որ արտաքին եզրերը զարդարված են եռանկյուն փոսիկներով, որոնք նույնպես ատամների տպավորություն են ստեղծում։ Սրանց տրամագիծը հասնում է 6—11 սմ, քաշը 19—266 գրամ։ Գտնվել են Բջնիում, Կամոյում, Մուխանում (աղ. 3, նկ. 7), Բասարգեչարում, Թումանյանում, Ալավերդում, Լենինականում, Ճամբարակում (աղ. 3, նկ. 8) և Շամշադինում։

Չորրորդ տարբերակը բաղկացած է երեք օղակաձև ապարանջաններից։ Դրանցից երկուսի վրա կան 17 ելուստներ, իսկ մեկի վրա՝ 6 հատ։ Ելուստները ձևով փոքր ինչ տարբերվում են իրարից։ Ապարանջաններից մեկի ելուստները (գտնված Ուրմիայում) կիսագնդերի ձև ունեն, իսկ մյուս երկուսինը, որոնք գտնվել են Խրտանոցում, փոքր ինչ երկարավուն են։ Տրամագիծը 6—8,5 սմ է հասնում։

Ատամնավոր ապարանջանների թվագրությունը որոշ չափով դժվարանում է նրանով, որ դրանց մի մասը հայտնաբերված է պատահականորեն, զուրկ ուղեկցող իրերից։ Տարրերը Զոլաքարի, Մուխանի, Գոլովինոյի, Ցամաքաբերդի, Աթարբեկյանի և Ջրառատի ժողովածուներն են, որոնց հիման վրա սրանց կարելի է թվագրել 9—4 դդ.։

Տափակ ապարանջանները 22 են, ունեն երեք տարբերակ։

Առաջինին են պատկանում վեց ապարանջաններ։ Դրանք պատրաստված են հաստ տափակ բրոնզե թիթեղից, որոնց հեռացվող ծայրերը կլորացված են։ Ապարանջանների լայնությունը կենտրոնում հասնում է 1—2,2 սմ և փոքր ինչ նեղանում է ծայրերում։ Արտաքին երեսները զարդարված են երկու-երեք գծից բաղկացած զիգզագներով և զարդով։ Տրամագիծը 6—7,5 սմ, քաշը 15—167 գրամ։ Գտնվել են Նորաշենում, Թումանյանում, Սանահինում (աղ. 2, նկ. 9) և Ստեփանավանում (աղ. 2, նկ. 8)։ Այս նույն տարբերակին պայմանականորեն միացնում ենք երկու օղակաձև ապարանջաններ, որոնք նույնպես պատրաստված են բրոնզե տափակ թիթեղից։ Դրանցից առաջինը, որը գտնվել է Այրումում (աղ. 2, նկ. 11) զարդարված է իրար միացված սպիրալներով, որոնք եզրագծված են հյուսածո զարդով։ Երկրորդը, որը գտնվել է Ալավերդում (աղ. 2, նկ. 10), նույնանման զարդ ունի, միայն այն տարբերությամբ, որ սպիրալների մեջ տեղավորված են գորտերի պատկերաքանդակներ։

Գորտերի պատկերաքանդակները հայտնի են Լճաշենից, որտեղ հայտնաբերված է գորտի փոքրիկ ոսկեձույլ քանդակ[12]։ Ազգագրական գրականության մեջ արտահայտված է այն կարծիքը, որ գորտը կապված է պտղաբերության և ջրի պաշտամունքի հետ։ Այդ նույն պատկերացումը ունեցել են նաև հայերը[13]։

Երկրորդ տարբերակը բաղկացած է 15 ապարանջաններից, որոնք պատրաստված են բրոնզե նեղ թիթեղից և ունեն հեռացող ծայրեր։ Համարյա բոլորը զրկված են զարդերից։ Հանդիպում են միայն V ձևի օրնամենտներ և կարճ գծիկներ։ Տրամագիծը 4 սմ է, քաշը 7—65 գրամ։ Դրանք գտնվել են Կամոյում, Աստղաձորում, Ցամաքաբերդում (աղ. 2, նկ. 7), Էլարում, Բջնիում, Ջրառատում, Դիլիջանում, Կիրովականում և Ալավերդում։

Երրորդ տարբերակը ներկայացված է մեկ ապարանջանով, որը պատրաստված է բրոնզե նեղ թիթեղից և ոլորված է հինգ սպիրալաձև փաթաթով։ Տրամագիծը 5,5 սմ։ Ծագումն անհայտ է, ըստ երևույթին, այս ապարանջանը գտնվել է Ե. Լալայանի՝ Նոր Բայազետում կատարած հին պեղումների ժամանակ։ Նման ապարանջանները թվագրվում են Ստեփանավանի, Աստղաձորի, Ջրառատի հավաքածուներով և վերաբերվում են մ. թ. ա. 9—4-րդ դ.։ Իսկ Արմավիրից հայտնաբերված օղակաձև ապարանջանները, համեմատելով Արթի-

12 А. О. Мнацаканян, Лчашенские курганы, КСИИМК, вып. 65, 1961, рис. 24.

13 Վ. Բդոյան, Երկրագործական պաշտամունքի մի քանի հետքեր հայերի մեջ, Աշխատություններ պետական պատմական թանգարանի, հատոր III, էջ 69։

կից և Այրումից գտնվածների հետ, ըստ երևույթին, թվագրվում են մ. թ. ա. 2 հազ. վերջով։

Օձագլուխ ապարանջանները կազմում են հիմնական խմբերից մեկը (118 հատ) և բաժանվում են 7 հիմնական տարբերակների։

Առաջինը բաղկացած է 22 ձուլված ապարանջաններից։ Սրանք կտրվածքում կլոր բրոնզելարեր են, որոնց հեռացվող ծայրերը զարգարված են օձերի մասսիվ գլուխներով։

Այս ապարանջանները աչքի են ընկում իրենց նուրբ ձուլվածքով, որը մանրամասնորեն վերարտադրում է օձի գլխի ձևը։ Մի քանի նմուշներ (բաց երախով, բութ դնչով, կլոր քթանցքներով և ցցված ականջներով) հիշեցնում են այն առասպելական կերպարը, որը հետագայում հայկական իրականության մեջ վիշապ անունն է ստացել։

Այս ապարանջանները իրենց ձևով բաժանվում են երկու խմբի։ Առաջին խմբին վերաբերում են կիսակլոր, մասսիվ ապարանջանները, որոնց բոլոր մասերը որոշակի կերպով ընդգծված են։ Երկրորդ խմբին են պատկանում այն ապարանջանները, որոնք ունեն ընդգծված կլոր աչքեր, ցցված հոնքոսկրներ և սրված քթեր։ Համարյա բոլորը գտնվել են ուրարտական կամ ժամանակակից այլ հուշարձաններից՝ Արին բերդից, Կարմիր բլուրից, Նոր Արեշից, Մուխանթ թափայի մոտի դամբարանից (աղ. 2, նկ. 1), Արմավիրից, Աստղաձորից (աղ. 2, նկ. 3—4), Աթարբեկյանից (արծաթյա), Խզնաուզից (աղ. 2, նկ. 2)։ Տրամագիծը 6—11 սմ, քաշը 19—108 գրամ։

Երկրորդ տարբերակը բաղկացած է 21 ապարանջաններից, որոնք պատրաստված են կտրվածքում կլոր կամ կիսակլոր բրոնզե լարից և ունեն տափակ հեռացող ծայրերը։ Մի քանիսի արտաքին կողմը զարդարված են խաչաձևվող գծիկներով և W ձևի զարդով։ Ծայրերին կետերով նշված են աչքերը և քթանցքները, որոնք հիշեցնում են օձի գլուխը։ Տրամագիծը 4,5—8 սմ, քաշը 4—104 գրամ։ Գտնվել են Արին բերդից, Կարմիր բլուրից, Բջնիից, Աթարբեկյանից, Մուխանից, Կամոյից, Աստղաձորից (աղ. 4, նկ. 11—12), Բասարգեչարից, Օձունից (Ուզունլարից), Կոբերից և Շամշադինից։

Երրորդ տարբերակը բաղկացած է 3 ապարանջաններից, որոնք նման են առաջինին, բայց ունեն ատամնավոր իրան, գտնված են Նոր Արեշի ուրարտական կոլումբարիից։ Դրանցից միայն մեկն է ամբողջական, որի տրամագիծն է 6,5 սմ, քաշը 39 գրամ։ Հետաքրքիր է նշել, որ այստեղ, ինչպես նաև Կուրթանից[15] գտնվել են ապարանջաններ, որոնք ունեն խոյաձև ծայրեր։

Չորրորդ տարբերակը բաղկացած է 6 ապարանջաններից, որոնք պատրաստված են անագից կամ բրոնզից, ունեն կլոր կտրվածք և բութ կամ սուր հեռացող ծայրեր։ Ծայրերը երկու կողմից զարդարված են և կլոր փոսիկներով, իսկ արտաքինից՝ գծիկներով, որոնք օձի գլխի տպավորություն են թողնում։ Տրամագիծը՝ 4,5—7 սմ, քաշը 8—27 գրամ։ Գտնվել են Մուխանում, Յամաքաբերդում, Ջրառատում։

Հինգերորդ տարբերակը բաղկացած է 4 մասսիվ ապարանջաններից, որոնք ունեն կիսակլոր կտրվածք և տափակ ալիքաձև հեռացող ծայրեր։ Ծայրերը արտաքին կողմից եզրագծված են հորիզոնական գծիկներով, իսկ ներսի կողմից

14 Հ. Մարտիրոսյան, Հ. Մնացականյան, Նոր Արեշի ուրարտական կոլումբարին, ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», № 10, 1958, էջ 66, աղ. II։

15 Հ. Մարտիրոսյանի և Լ. Բարսեղյանի հավաքածուն, որ չի հրատարակված։

ռոմբաձև զարդերով, աչքերը դրված են կետերով։ Տրամագիծը 7—8 սմ, քաշը 27—98 գրամ։ Գտնվել են Աստղաձորում, Աթարբեկյանում, Ջրառատում։

Վեցերորդ տարբերակը ներկայացված է 2 ապարանջաններով, որոնցից առաջինը կիսակլոր կտրվածք ունի և հեռացվող ծայրերը զարդարված են 4 կետերով, որոնցով նշվում են աչքերը և քթանցքները։

Երկրորդի ծայրերը համարյա միացվող են և զարդարված են մռութ ունեցող ակնոցավոր օձի գլխիկներով։ Վզի վրայով անցնում են 6 շարք M ձև գծագարդ։ Տրամագիծը 5,5 սմ, գտնվել են Իջևանում[16]։



Աղյուսակ 4

7-րդ տարբերակը բաղկացած է 60 ամբողջական և կոտրված ապարանջաններից, որոնք պատրաստված են կլոր կամ կիսակլոր բրոնզե լարից։ Հեռացվող ծայրերի վրա կան գծիկներ։ Բոլորն էլ կենտրոնում մի փոքրիկ կորություն ունեն։ Տրամագիծը 5,5—9 սմ, քաշը 4—16 գրամ։ Գտնվել են Կարմիր բլուրում (քաղաքային մաս), Աթարբեկյանում, Բջնիում, Աղբաշում, Գառնիում, Դվինում, Անիում և Ջրառատում։

Այս ապարանջանները համեմատվում են Աքեմենյան կուլտուրական աշխարհի ոսկե ապարանջանների հետ, որոնք հայտնի են Ամու Դարյան գանձից (5-րդ դար), Սուզայից (4-րդ դար) և Կիպրոսից (5—4-րդ դդ.)[17]։

Այս տիպի ապարանջանների թվագրությունը առանձին դժվարություն չի ներկայացնում։ Նրանք բոլորն էլ գտնվել են ուրարտական կամ նրանց ժամա-

---

16 С. А. Есаян. Арх. находки близ поселка Иджеван, «Известия» АН АрмССР, № 4, 1961, стр. 79, рис. 7.

17 А. О. Мнацаканян, Г. А. Тирацян, ук. соч., стр. 73.

նակակից հուշարձաններից և թվագրվում են մ. թ. ա. 9—6-րդ դդ.։ Բացառություն են կազմում վեցերորդ և յոթերորդ տարբերակների ապարանջանները, որոնք ունենալով օձագլուխ ապարանջանների ձև, խիստ ձևափոխվել են և ընորոշ են վաղ հայկական ժամանակաշրջանին, ուստի թվագրվում են մ. թ. ա. 6—4-րդ դարերով։

Անկասկած, օձագլուխ ապարանջանները կապված են օձի պաշտամունքի հետ, որը տարածված էր աշխարհի բոլոր ծայրերում, այդ թվում և Հայաստանում։ Օձի այնպիսի ունակությունները, ինչպիսիք են սեղմողական ուժը, մաշկազերծ լինելը, երկարակեցությունը և նրա թունավորելը համոզել են նախնադարյան մարդուն, որ օձը հատուկ կարգի էակ է, և նրան ներշնչել օձի անմահության գաղափարը։

Օձի պտղաբերության հատկությունը և նրա առնչակցությունը սեռական կյանքի հետ նկատվում է նաև այն բանում, որ նա նմանություն ունի ֆալուսի հետ։ Հաշվի առնելով այս պարագան, հասկանալի է դառնում օձի հսկայական դերը ֆալուսի պաշտամունքի մեջ։

Ռոմբաձև կտրվածքով ապարանջանները 14 հատ են, բաժանվում են երեք տարբերակի։

Առաջին տարբերակը բաղկացած է 5 ապարանջաններից, որոնք ռոմբաձև կտրվածք ունեն և հեռացվող ծայրեր։ Մի քանիսի եզրերը զարդարված են մեկ կամ երկու գծից բաղկացած քերթիկներից, տրամագիծը 4,5—7,5 սմ, քաշը 20—75 գրամ։ Գտնվել է Այրիվանքից, Գոլովինոյից, Բասարգեչարից, Լենինականից։

Երկրորդ տարբերակը բաղկացած է 7 ապարանջաններից, որոնք նույնանման կտրվածք ունեն և մոտեցող ծայրեր։ Նրանցից մի քանիսը զարդարված են քերթիկներով և եռանկյունաձև փոսիկներով։ Տրամագիծը 5,5—7,5 սմ, քաշը 16—70 գրամ։ Դրանցից երկու ապարանջան կենտրոններում մասսիվ են և ծայրերի մոտ նեղանում են։ Գտնվել են Գեղարոտում, Ալավերդում (աղ. 3, նկ. 12 և աղ. 4, նկ. 5), Բջնիում և Բասարգեչարում։

Երրորդ տարբերակը բաղկացած է երկու ապարանջաններից, որոնք ունեն նույնանման կտրվածք և մեկը մյուսի վրա անցնող ծայրեր։ Տրամագիծը 5,5—8 սմ, քաշը 13—52 գրամ։ Գտնվել են Կամոյից և Բասարգեչարից։ Ռոմբաձև ապարանջանները թվագրվում են Գեղարոտի և Բասարգեչարի հավաքածուների հիման վրա մ. թ. ա. 13-րդ—6-րդ դդ.։

Մասսիվ ապարանջաններ 51 հատ են, իրենց ձևով նմանվում են վերոհիշյալ մի շարք տիպերին, սակայն նրանցից տարբերվում են մեծությամբ, քաշով և կոպիտ մշակմամբ, միայն մի քանիսը հարթ մակերես և զարդեր ունեն, ուստի հարմար ենք գտնում սոսկ նշել նրանց տիպապատկանելությունը։

Հեռացվող ծայրերով ապարանջանների թիվը 22 է, տրամագիծը 8,5—12,5 սմ, քաշը 83—380 գրամ։ Գտնվել են Աստղաձորից (աղ. 4, նկ. 4), Կիրովականից (աղ. 1, նկ. 1), Սանահինից, Լճաշենից (միայնակ դամբարան մ. թ. ա. 1-ին հազ. սկիզբ) (աղ. 5, նկ. 3) և Անիից։

Մոտեցող ծայրերով ապարանջանները 21 են, տրամագիծը 8—12 սմ, քաշը 173—430 գրամ։ Գտնվել են Երևանից, Դվինից (աղ. 5, նկ. 1), Անիից (աղ. 5, նկ. 6), Էլարից, Քաղսիից, Կամոյից, Զոլաքարից, Ալավերդուց, Սանահինից, Ուզունլարից (աղ. 5, նկ. 5) և Ստեփանավանից։

Օղակաձև ապարանջանների թիվը 7 է, տրամագիծը՝ 7,5—10,5 սմ, քաշը

108—170 գրամ։ Գտնվել են Ալավերդուց (աղ. 4, նկ. 6), Այրումից, Ստեփանավանից (աղ. 5, նկ. 2), Սանահինից, Նղեգնուտից, Շամշադինից և Ցամաքաբերդից։

Մասսիվ ապարանջանների թվագրումը ճշտվում է այնպիսի հուշարձաններով, ինչպիսիք են Աստղաձորը, Զոլաքարը, Լճաշենը, որոնց հավաքածուները վերաբերում են վաղ ուրարտական ժամանակաշրջանին, և Ցամաքաբերդը, որը ուշ ուրարտական ժամանակաշրջանի է (մ. թ. ա. 9—6-րդ դդ.)։

Անցյալ դարի վերջում, ֆրանսիացի հնագետ Ժակ դե Մորգանը Լալվարում պեղել է մեծ քանակությամբ դամբարաններ։ Նա ապարանջանների վերաբերյալ առաջ է քաշում մի հետաքրքիր տեսակետ։ Բոլոր ապարանջաններն իրենց նշանակությամբ նա բաժանում է երկու տիպի՝ զարդարուն ապարանջանները համարելով զարդ, իսկ հարթ, հատկապես մասսիվ ապարանջաններին հատկացնում է փոխանակության էկվիվալենտի դեր։

Մորգանն այդ եզրակացությանը հանգեց այն բանից հետո, երբ դամբարաններից մեկում հայտնաբերեց 8 մասսիվ ապարանջաններ՝ 4 կգ. 550 գ. ընդհանուր քաշով։ Զուգահեռ անցկացնելով այդ քաշը առաջավոր ասիական հնագույն կշռաչափերի, հատկապես սիկղի հետ, Մորդանը ստացավ 540 սիկղ[18]։ Խմբավորելով մոտիկ քաշեր ունեցող ապարանջանները, նա ստացավ 20 խումբ, որոնց միջին քաշը սկսվում էր 16,400 գ և վերջանում 665 գ-ով։ Մորդանը միաժամանակ գտնում էր, որ 8.200 ամբողջական գրամը առաջին խմբի ապարանջանների քաշի կեսն է և հետևյալ բոլոր խմբերի՝ 16,400 գ, 25,200 գ, 32,000 գ, 39,900 գ, և այլն մինչև 665 գ հիմքը։

Խմբերի համեմատության միջոցով Մորդանը գալիս է այն եզրակացության, որ իր կողմից ստեղծված, այսպես կոչված Կովկասյան սիկղի հիմքը հանդիսանում է մոտավորապես 8,400 գ։

Այս տեսությունը ընդունել են մի քանի ուսումնասիրողներ, բայց 1954 թ., Գոլովինոյի ապարանջանները ուսումնասիրելով, Հ. Ա. Մարտիրոսյանը հերքել է այն[19]։

Սույն աշխատանքը գրելիս մենք մեծ խնամքով կշռել ենք ավելի քան 400 ապարանջան՝ անկախ նրանց հարթ կամ անհարթ լինելուց։ Մեր ելակետը հետևյալն էր. եթե վարպետները կարող էին պատրաստել ապարանջաններ որևէ հատուկ քաշով, ապա նրանք այդպես կվարվեին և զարդարուն ապարանջաններ պատրաստելիս։ Ստացված արդյունքները ստիպեցին կանգնել Մորգանի տեսակետի վրա։ Մեր ապարանջանների քաշը սկսվում է 4 գրամից և մեկական գրամ ավելանալով հասնում մինչև 54 գրամի, այնուհետև փոքր ինչ բացառությամբ, ավելանում է և հասնում 430 գ (տե՛ս աղ. 2)։

Ժակ դե Մորգանը գրում է, որ իր ապարանջանների հիմնական խմբերի քաշը եղել է 30—40 գ և 80—90 գ, այլ կերպ ասած՝ համաձայն իր տեսության կազմում է 5 և 10 սիկղ։

Մեր կողմից կազմած աղյուսակում ավելի քան 400 ապարանջաններից միայն 50-ը ունեն նշված քաշը, այսինքն ընդհանուր թվի $^1/_8$ մասը։ Ժակ դե Մորգանը յուրակերպ է կազմել հիշյալ խմբերը. նրա սխեմայից (տես իր գրքի

[18] J. de Morgan, Mission scientifique au Caucase, I էջ 110.
[19] А. А. Мартиросян, Раскопки в Головино, стр. 80.

Ապարանջանների քաշն (գրամներով) ու քանակը

Կշիռը	Քանակը	Կշիռը	Քանակը	Կշիռը	Քանակը	Կշիռը	Քանակը	Կշիռը	Քանակը
4	3	30	5	60	2	108	1	205	1
5	8	31	2	61	3	111	1	210	1
6	4	33	8	64	2	115	2	226	1
7	7	34	2	65	5	119	1	233	1
8	13	35	1	68	4	122	2	245	2
9	10	36	4	70	5	123	2	258	1
10	9	37	1	73	1	125	2	263	1
11	8	38	5	75	4	126	2	270	1
12	14	39	4	76	1	127	2	276	1
13	7	40	2	79	1	131	1	293	2
14	5	41	1	80	2	141	1	308	2
15	9	42	3	81	1	147	1	313	2
16	4	43	2	82	2	150	2	3,5	1
17	11	44	1	83	2	156	1	321	1
18	9	45	7	86	1	157	1	380	1
19	6	46	2	88	1	167	1	413	1
20	9	47	2	90	2	168	1	430	1
21	1	48	2	92	1	170	1		
22	6	49	2	95	1	173	1		
23	3	50	3	96	1	175	2		
24	6	51	1	98	1	177	1		
25	3	52	4	100	3	180	2		
26	6	53	3	101	1	184	1		
27	12	54	4	102	1	190	4		
28	2	56	2	104	1	202	1		
29	1	58	1	105	1	203	1		

110 էջը) երևում է, որ առաջին խումբը բաղկացած է 7 ապարանջանից, երկրորդը՝ 4-ից, երրորդը՝ 6-ից, իսկ չորրորդը՝ 19 ապարանջանից։

Այդ խմբերից միայն 17, 25, 33, 42 գրամանոց ապարանջաններն են 2—3, 4—5 սիկղ կազմում, քանի որ մյուս ապարանջանները սիկղերի չեն բաժանվում։

Մեզ թվում է, որ խմբավորելով մինչև 19 ապարանջան կարելի է ստանալ ցանկացած միջին քաշը, որը մոտավոր ճշտությամբ բաժանվի 8,4 գ-ի։

Այդ պարզ երևում է Մորգանի կողմից կազմած մի այլ աղյուսակից (իր գրքի 112 էջում), որտեղ սիկղը կշռում է 8,37 գ—8,40 գ և 13 գ։ Վերցնելով 8,4 գ, որպես սիկղի հիմք և ստուգելով ավելի քան 70 ապարանջան, որոնք ունեին 100 գ և ավել քաշ, մենք պարզել ենք, որ միայն 7 ապարանջանի քաշն է մոտավոր ճշտությամբ բաժանվում սիկղի քաշին։

Նշված ապարանջանները իրենց հիմքում չեն ունեցել կշռային չափանիշ, որովհետև նրանց քաշը մեծանում է մեկ կամ մի քանի գրամ տարբերությամբ (տե՛ս աղ. 2)։

Մեր կարծիքով Մորգանը ճիշտ էր միայն մի հարցում, որ ապարանջանները եղել են էկվիվալենտ, ոչ կշռաքարերի, ինչպես կարծում էր նա, այլ պատրաստի առարկաների։

Այդ ապարանջանները, ինչպես նաև սակրերը, տապառները, բրիչները, վզնոցները, որոնց կշիռը դեր չի խաղում, հանդիսացել են փոխանակման միջոց երկրագործական և մետաղագործական շրջանների միջև[20]։

---

20 А. А. Иессен. К вопросу о древнейшей металлургии меди на Кавказе. Изв. ГАИИМК, вып. 120, стр. 157—158.

Այսպիսով, էնեոլիթյան ժամանակաշրջանից սկսած առաջ են գալիս ապարանջանները։ Վաղ և միջին բրոնզի շրջանում (չհաշված Մուխանաթ թափայից գտնված թվագրման տեսակետից կասկածելի ապարանջանը), նրանք բացակայում են, որը բացատրվում է այդ ժամանակաշրջանի հուշարձանները քիչ պեղելու հանգամանքով։

Ապարանջանները նորից հանդես են գալիս ուշ բրոնզի ժամանակաշրջանում և լայն տարածում են ստանում մ. թ. ա. 1 հազարամյակի սկզբին և իրենց գոյությունը պահպանում են մինչև քննարկվող ժամանակաշրջանի վերջը (մ. թ. ա. 4-րդ դար)։

Գտնված ապարանջանների վայրերը ապացուցում են, որ նրանք տարածված են եղել ամբողջ Հայաստանում, սակայն այժմ դեռևս փաստեր չկան լոկալ տարբերակներ առանձնացնելու համար։

Իրենց արտաքին տեսքով ապարանջանները բաժանվում են 7 տիպերի, որոնք, ժամանակագրական փոքր ինչ տարբերությամբ, գոյություն են ունեցել միաժամանակ։ Ապարանջանների մի մասը (օձագլուխները, ֆալուսի ծայրերով և գորտի պատկերով) ունեցել է ռիտուալ նշանակություն։

Ապարանջանները միաժամանակ հանդիսացել են փոխանակման առարկաներ, չունենալով, սակայն, իրենց հիմքում կշռային էկվիվալենտի նշանակություն։

С. А. Есаян

БРОНЗОВЫЕ БРАСЛЕТЫ ГОС. МУЗЕЯ АРМЕНИИ

(Резюме)

В богатых фондах Гос. исторического музея Армении хранятся несколько сот браслетов. Древнейшие из них представлены из раскопок Лчашена, комплексы которых относятся к периоду ранней бронзы. Основная же их масса относится к XIII—IV вв. до н. э. Определенная часть браслетов была описана в общих работах и статьях, а огромное большинство до настоящего времени остается без систематизации. В настоящей статье мы ставим целью дать типологию браслетов, уточнив хронологические границы бытования и распространения каждого типа и их назначение.

Повидимому часть браслетов была эквивалентом для обмена, так же как и секиры, мотыги, топоры, шейные гривны, вес которых не играл роли при обмене.

Часть браслетов (змеиноголовые, с фаллическими концами и с изображением лягушек) была связана с культом весеннего пробуждения природы и плодородия. Основная же масса их служила предметами украшения.